

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/1

12 մարտի 2014 թ.

Քննարկվեց «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ 20.02.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 24.12.2013 թ-ի թիվ 1024191/2 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.10.2012 թ-ի թիվ 1024191/2 հանձնարարագրի համաձայն «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Նշված հանձնարարագրի հրապարակման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Մկրտչյանի «Քրեական գործով հարկային վերստուգում նշանակելու մասին» 23.08.2012 թ-ի որոշումը: Վերստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 24.12.2013 թ-ի թիվ 1024191/2 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Մկրտչյանի 17.03.2011 թ-ի որոշման համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով «Մեզա Գոլդ» ՍՊԸ ընկերության տնօրեն Աշոտ Պողոսյանի (որը հանդիսանում է նաև «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ տնօրենը) կողմից հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 83156811 քրեական գործը, որը ներկայումս գտնվում է նախաքննության փուլում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83156811 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ 20.02.2014 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

«Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ 20.02.2014 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ